

լինելով միանգամայն դեռ հում, եւ որով կարծեմ մեր արդի բանասերներէ ոչ ոք զբաղած է: Նոյն ինքն Հ. Ղ. Ինճիճեան իւր եռահատոր Հնախօսութեան մէջ աւելցողիւր թողած է զայս: Եւ Հ. Յ. Աւգերեան ի «Բացատր. Չափուց եւ կշռոց» կը խօսի մեր քննելի շատ անօթոց մասին, բայց առանց հնազիտական ճշդութեան ու նկարագրի: Հետեւաբար աշխատութեանս համար ինձ աղբիւր կը մնար, եւրոպականէն զատ, գլխաւորապէս տոհմային հին մատենագրութիւնը, — տպագիր ու զրչագիր, — որոյ ճոխագոյն մասն է ոսկեղարեանը: Այս վերջին պարագայս նպաստաւոր է մեզ, որ սովորաբար հնէն աւելի հնագունով կը հետաքրքրուինք, եւ ծնողին նկարագրին մէջ կ'ախորժինք նկատել նաեւ ծնունդինը:

Վերջին դիտողութիւն մ'ալ: Հոս եւ առ հասարակ հնախօսական աշխատութեանցս մէջ ինձ չէ կարելի աղբերացս վաւերականութեան խնդրով զբաղիլ, ինչպէս երբեմն պահանջուած է ինձմէ: Վասն զի այդ պարագային պիտի գործէի երկար եւ անդէպ շեղումներ նիւթէս ու ծանրաբեռնութիւններ, եւ փոխանակ հնախօսութեան՝ մատենագրութիւն պիտի յօրինէի: Բանասիրութեան այդ մասը չի հաշտուիր